

ման ու Աստուծոյ միջեւ՝ որուն նուիրուած էր: — Այդպէս եղած է մեր քով եւս, եւ հայ գրողաց ու գրչագրաց, նկարչաց ու երաժշտաց մեծագոյն մասն վանական որմերէն ներս բուսեր ու ծաղկեր են. հոն ծնաւ հայ գիրն ու գրականութիւնն իսկ: Նըկատելով սակայն Հայաստանի վանքերու բազմութիւնն եւ անոնց մէջ ամփոփուած մարդկային ամբօխը, մտաւորական արդիւնքը շատ անհամեմատ պիտի գտնենք. եւ այս պարագայն կը մեկնուի այն գեղխութեամբ որով անոնք վարակուած էին: Նոյն ինքն հայ մտաւորականութեան ամենէն փայլուն շրջանին, ինչպէս ոսկեդարն էր, եւ զարմանալի հակասութեամբ մ'այդ ժամանակ մանաւանդ՝ «յոլովք» մեր վանականներէն անհմուտ կ'ապրէին գրոց, եւ բուն կերպով կը հալածէին անգամ՝ թէ ի կենդանութեան եւ թէ մինչեւ յետ մահու եւս՝ գրոց մշակները, երանելի թարգմանիչները, որոնք ներշնչուեցան յոյն մտայնութենէն ու փորձեցին ներշնչել հայ մտքին (Փրպ. 602-10): Այդ հալածուածներէն էր նոյն ինքն տեղեկատուդ Ղազար, որ կ'աղաղակէ՝ թէ իւր սեպհական ու սիրական գրեանքը դատապարտուած էին «ի կերակուր ցեցոյ՝» վաղարշապատու կաթողիկէի վանուց մէջ, որոյ